

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՑ
ՀՀ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ 2011-2012 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ
ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱԶՎԱԾ ԵՎ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ ԸՍՏ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ - 728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով

Կարգադրում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզից ՀՀ դպրոցականների 2011-2012 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների մարզային փուլում հաղթող ճանաչված և հանրապետական փուլին մասնակցության երաշխավորված աշակերտների անվանացանկը ըստ առարկաների՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14 հավելվածների:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզից ՀՀ դպրոցականների 2011-2012 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների մարզային փուլում հաղթող ճանաչված և հանրապետական փուլին մասնակցության երաշխավորված աշակերտների մասնակցության ապահովումը հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ Հ. Սաֆարյանին:
3. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ